

2021թ. հունիսի 14-20-ը դիտված հիդրոօդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Հունիսի 14-20-ը հանրապետության տարածքում դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունիսի 14-ին եղել է նորմայից բարձր 2-3, 15-ին՝ 3-6, 16-18-ին՝ 4-7, 19-20-ին՝ 6-8 աստիճանով:

Շաբաթվա ընթացքում բացառությամբ Լոռու և Տավուշի մարզերի, մնացած մարզերի առանձին օդերևութաբանական կայաններում օդի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է տվյալ օրը երբևիցե դիտված ամենաբարձր ջերմաստիճանին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Վայոց Ձորում՝ նախալեռնային շրջաններում՝ +40°C, Լեռնային շրջաններում՝ +29°C, Արմավիրում՝ +39°C, Արարատում՝ +38...+39°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +34...+36°C, նախալեռնային շրջաններում՝ +28...+29°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +32...+37°C, Լեռնային շրջաններում՝ +28...+30°C, Տավուշում՝ +30...+35°C, Շիրակում՝ +31...+33°C (Ամասիայում, Աշոցքում՝ +26...+27°C), Կոտայքում՝ Լեռնային շրջաններում՝ +29...+30°C, նախալեռնային շրջաններում՝ +35°C, Լոռիում՝ +27...+31°C (Տաշիրում՝ +24°C), Գեղարքունիքում՝ +26...+30°C (Սեմյոնովկայում, Սևանում՝ +22...+24°C), Երևան քաղաքում՝ +38...+39°C:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +12...+16°C, Լեռնային շրջաններում՝ +4...+6°C (Ամբերդում՝ +11°C), Շիրակում՝ +2...+7°C (Արթիկում՝ +10°C), Լոռիում՝ +6...+11°C (Տաշիրում՝ +5°C), Գեղարքունիքում՝ +5...+10°C (Շորժայում՝ +11°C), Կոտայքում՝ Լեռնային շրջաններում՝ +6...+10°C, Վայոց Ձորում՝ Լեռնային շրջաններում՝ +6°C, նախալեռնային շրջաններում՝ +16°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+20°C, նախալեռնային շրջաններում՝ +10...+14°C, Արմավիրում՝ +13°C, Տավուշում՝ +9...+14°C, Արարատում՝ +13...+15°C (Արարատում՝ +19°C), Երևան քաղաքում՝ +15...+17°C:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամի՝ 8-18մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ մինչև 18-22մ/վրկ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում շարունակել են գյուղատնտեսական աշխատանքները, եղանակային պայմանները նպաստավոր են եղել այն իրականացնելու համար:

Հովտային շրջաններում կատարվել են պտղատուների, աշնանացան ցորենի, բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի այգիների, առվույտի և ծխախոտի դաշտերի հերթական սնուցող ոռոգումներ, կորիզավորների բերքահավաք, շարունակվել է խաղողի վազի ծաղկումը:

Արարատում, Եղվարդում աշնանացան ցորենը գտնվել է կաթնային, Մերձավանում՝ մոմային հասունացման փուլերում, Լեռնային շրջաններում աշնանացանը հասկակալել է, Գյումրիում՝ ծաղկել: Գյումրիում, Մարտունիում,

Մասրիկում գարնանացան գարին ցողունակալել է, Ապարանում, Շորժայում առաջացել են հանգուցային արմատները:

Գորիսում և Օձունում առաջացել է եգիպտացորենի երրորդից - յոթերորդ տերևը:

Դիտված բարձր ջերմաստիճանների և տեղումների անբավարարության հետևանքով հանրապետությունում մշակաբույսերի աճի և զարգացման համար ստեղծվել է անբարենպաստ պայմաններ, բույսերը լրացուցիչ որոռգման կարիք ունեն:

Հունիսի 14-20-ին հանրապետության գետերում դիտվել է ջրի ելքերի նվազում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 3 սմ-ով (13.06-20.06.2021թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.84մ (20.06.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 1 սմ-ով:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գ.Սուրենյան
Հեռ.՝ 012 31 79 21